Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

47.925
U-62

~~950~~
1072

566в
9(47.925)
Ա-62
24 JAN 2006

DR. ANTONIUS I.

ՎԱՐԴԱՊԵՏ

ԼԵՀԱՍՏԱՆԻ ՀԱՅԵՐԻ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ
ՎԵՐՋԻՆ ԵՐԵՍԸ

Թարգմանեց
Մ. ԲԱՐԽՈՒԴԱՐԵԱՆ

ԲԱՔՈՒ
Տպարան Ս. Անտոնեանցի.
1903

13 FEB 2013

Дозволено Цензурою. 25 Января 1902 г. Тифлисъ.

ՎԱՐԴԱՊԵՏ

Բագուի Հայոց
Հռիփսիմեան Դպրոց
եկեղ.-ծխակ. (օրիորդաց)

Ա Զ Դ.

Լեհաստանի հայերի պատմութեան եւ Նիկոլ Թորոսովիչ եպիսկոպոսի կատարած տխուր դերին նուիրուած աշխատութիւններ շատ կան: Այս փոքրիկ յիշատակարանը, որի հեղինակը ժամանակակից էր XVII դարում տեղի ունեցած այդ անցքերին, նկարագրում է մի դէպք, երբ հայ կինը ջերմ պաշտպան է հանդիսանում իւր մայրենի եկեղեցուն, իւր ամբողջ էութեամբ բողոքում է եկեղեցիների միութեան դէմ, եւ այդ բոլորը անում է այնպիսի անձնուիրութեամբ ու եռանդով, որ նախանձելի օրինակ կարող է լինել եւ այժմ իսկ շատերի համար:

1666 թ. օգոստոսի 12-ին Նիկոլը կամենեց է ժամանում հայր Պիդուի հետ: Այդտեղ նա հրամայում է քահանաներին, որ հետեւեալ օրը պատարագ մատուցանեն լատինական եկեղեցու ծէսով, բայց քահանաները միաբերան մերժում են եւ զնում պատմում դատաւորներին: Ժողովուրդը սաստիկ յուզվում է եւ կատաղում: Նոքա

գոչում՝ են, թէ մենք ոչ ոքի չենք ճանաչում՝ եւ ոչ ոքի չենք հնազանդիլ, բացի ս. Էջմիածնի կաթողիկոսից, եւ թէ այդ բռնութիւնների դէմ թագաւորին կը բողոքենք։—„Բռնի միութիւն հայոց Լեհաստանի ընդ եկեղեցւոյն Հռովմայ» գրքի յառաջաբանում՝ պ. Կ. Եզեանը վերոյիշեալ տողերին կցում՝ է հետեւեալ ծանօթութիւնը.

„Յայսմ ժամանակի, յորժամ դիւցազնաբար յարեան հայք Կամենեցի ի պաշտպանութիւն եկեղեցւոյն իւրեանց ընդդէմ անօրէն հրամանաց Նիկոլի՝ հանդիսացաւ առնապէս կինն Սեֆերովիչ, մայրապետն կուսաստանին հայոց, որոյ ի մեծի պատուի զոլով առ ամենեսեան՝ յորդորէր քաջալերէր զժողովուրդն մի անսալ բռնութեանցն, այլ ցանդ հաստատուն կալ եւ մնալ ի հաւատս իւրեանց, թէպէտ եւ ամենայն ջանիւք իւրեանց հնարէին խափան լինել նմա Յիսուսեանք եւ եկեղեցականք Լատինացւոց։ Յայս սակս եւ անմահօրէն զրուցեն զկնոջէն հեղինակք կրկին Յիշատակարանացս (էջք 82, 187, 194)։—Են տեղեկութիւնք հետաքնինք զվարուց այսր Սեֆերովիչի ի մատենական Dr. Antoni-ի ընդ մակ ազգաւս Nowe Opowiadania Historycshne, ի հատուածին, որ կոչի Wartabied։ Էին առ հեղինակին աղբերք պատմականք ծեռագիրք, որ չեւ եւս են ընծայեալք ի լոյս“ [1]։

Ահա այս ծանօթութեան մէջ յիշած Wartabied *հատուածի թարգմանութիւնն ենք տալիս հայ ընթերցողին, հանելով „Научное Обозрѣніе“ ամսագրի անցեալ 1901 թ. 6-րդ եւ 7-րդ գրքերից։ Սոյն յօդուածին կցած ներածութիւնը պատկանում՝ է ռուս թարգմանիչ պ. Ս. Պիոտրովսկուն, որ, տարաբախտաբար, շատ շատերի պէս այն թիւր կարծիքն ունի, որ հայոց եկեղեցին հերձուածական է։*

Մ. Բ.

[1] Բռնի միութիւն հայոց Լեհաստանի ընդ եկեղեցւոյն Հռովմայ։ Ս. Պետերբուրգ, 1884, էջ լդ։

ՆԵՐԱԾՈՒԹԻՒՆ

Զգոյշ, հեւատես, աշխատասէր և հեզաբարոյ հայ ժողովուրդը ենթարկուած էր կրօնական «մոլորութիւնների»—աղանդապաշտ էր, ինչպէս այն ժամանակ էին ասում։ Այդ պատճառով հռովմէական կուրիայի նպատակն էր արմատախիլ անել հերձուածը և եկեղեցիների միութիւն զոյացնել։ Այնչափ էլ դիւրին չէր իրագործել այդ, որովհետև դա հակասում էր զաղթական հայերին տրուած արտունութիւններին, այսինքն՝ չէր համապատասխանում իւր ժամանակի լեհական հասարակութեան մեծամասնութեան համոզումներին, կրօնական համբերատարութեանը։

Լեհական Հանրապետութիւնը խոստացել էր հայերին, որ կարող են ազատ դաւանել իրենց կրօնքը. նոքա եպիսկոպոս էին կամենում ունենալ, որովհետև Կիևի պատրիարքութիւնը կամ, ինչպէս ուրիշներն են անուանում, Կիևի արքեպիսկոպոսութիւնն այդ ժամանակ ընկած էր, այլ ևս գոյութիւն չունէր։ Մեծն Կազիմիր՝ զիջանելով զաղթականների արդարացի պահանջներին, Իլվովն աթոռանիստ քաղաք նշանակեց հայոց թեմական առաջնորդների համար։ Թագաւորը չէր քննում այն հարցերը, թէ նոր թեմի սահմանները մինչև ո՞ւր էին տարածվում, թէ եպիսկոպոսն արդեօք ունէր օգնական, թէ արդեօք նորա իշխանութիւնը հաւասա՞ր էր լատին եպիսկոպոսների իշխանութեանը,—այդ բոլոր հարցերի լու-

ծուր թողուած էր իրենց գաղթականներին։ Գաղթականները հայ-լուսաւորչական դաւանութեան էին պատկանում և բերել էին իրենց հետ աւանդութիւնով վաւերացրած հրահանգներ։ Եպիսկոպոս ձեռնադրել կարող էր միայն Էջմիածնի կաթողիկոսը, իսկ պարօխները, քահանաները, պսակվում էին. քահանաների ընտրութիւնը կախուած էր ծխականներից, և նոքա որոշ ռոճիկ չէին ստանում, այլ ապրում էին ժողովրդի տուրքով։ Եկեղեցիների մասին հոգատարութիւնը յանձնուած էր «հոգաբարձուներին», որոնք ընտրվում էին արժանաւոր աշխարհականներից, և այս վերահասութիւնը, որ յաճախակի բռնակալական և ծանրաբեռնիչ էր լինում, այնչափ խոր արմատ էր ձգել, որ միութիւնը կայացնելուց յետոյ միայն 19 տարի անցած կարողացաւ արմատախիլ անել հ. Դէօդատ Ներսէսովիչը, Տրոյանապոլսի եպիսկոպոսը, Իլվովի կառավարիչը և այն էլ նա մեծ երկպառակութիւն ձգեց ժողովրդի մէջ։ Կային և ուրիշ մեղանչութիւններ հռոմէական եկեղեցու դաւանքների դէմ, որ մանրամասնօրէն պատմում է հ. Գալանոսը՝ Թէադինեանների կարգակիցը, որ միութեան ամենաեռանդուն քարոզիչներից մէկն էր։

Հասկանալի է ուրեմն, թէ որպիսի դժուարութիւնների պիտի հանդիպէին և յաղթէին լատին եկեղեցու կուսակիցները կանխաւ որոշած նպատակին հասնելու համար։ Նոցա ջանքերը սկսում են դեռ Սիգիզմունդ III-ի թագաւորութեան օրով, այսինքն այն ժամանակ, երբ մաքառում էին զանազան նորամուծութիւնների և հերձուածների դէմ։ Ինքը թագաւորը չատ բարեպաշտ էր, և յիսուսեանները, որ նոր էին կանչուած Լեհաստան, յանձն առան հերձուածողներին հաւատափոխ անելու գործը։ Նոցա սուր հայեացքից հայերը չխուսափեցին. հարաւային սահմանում գործերը չատ բարեյաջող գնացին, որովհետև Իլվովում հռոմէական հոգևորականութեան ներկայացուցիչն Անդրէաս Պրուխնիցկին էր, որ ս. Լոյոլայի կարգի նշանաւոր ջատագովն էր, իսկ հայոց եկեղեցում Մեսրոպ եպիսկոպոսի մահից յետոյ թիւրիմա-

ցութիւններ սկսեցին տեղի ունենալ։ Համանման գժտութիւններ, ճիշտ է, լինում էին առաջ էլ, որովհետև հայերը միշտ խռովում էին միմեանց հետ, սակայն այդ ժամանակուայ խռովութիւնն աւելի վտանգաւոր կերպարանք ստացաւ։ Այդ միջոցին Էջմիածնից եկած Մելքիսեդեկ կաթողիկոսը, որին համոզել էին միութեան կուսակիցները, աւելի պարզ ասած, կաշառել էին, եպիսկոպոս է ձեռնադրում 22 տարեկան կուսակրօն քահանայ Նիկոլ Թորոսովիչին, որ գաղթականներից մէկի որդին էր, Կամենեցում ծնուած և Կ. Պոլսում դաստիարակուած, և ձեռնադրում է առանց ժողովրդեան ներկայացուցիչների վկայութեան և հաւանութեան։ Այս տեղից ծագեց կատաղի երկպառակութիւն ու կռիւ հովուի և իւր հօտի մէջ. առաջնին պաշտպանում էր տեղական լատին հոգևորականութիւնը, իսկ երկրորդին—արտունութիւնը։

Նիկոլ Թորոսովիչը պատմութեան մէջ երևան է գալիս, որպէս եկեղեցիների միութեան գաղափարի մարմնացեալ անձնազոհութիւն, իսկ երբեմն էլ ցոյց է տալիս մինչև անգամ նահատակուելու պատրաստականութիւն։ Այսպէս, օրինակի համար, Եան-Կազիմիրի հետ խօսելիս, որ այդ ժամանակ տակաւին իշխան էր, երբ սա համոզում էր եպիսկոպոսին եկեղեցիներից մէկը տալ հայ լուսաւորչականներին, նա, ինչպէս ասում են, բացականչելով պատասխանում է. «Բարի եղէք և արդարացրէք ինձ նորին մեծութեան առաջ. և որովհետև ես կաթոլիկ արքեպիսկոպոս եմ, ուստի չեմ կարող տալ և ոչ մի եկեղեցի հերձուածողների ձեռը. յայտնեցէք, խնդրեմ, նորին մեծութեան, եթէ կամենում է, թող հրամայէ, որ ինձ սպանեն. նա Բոլեսլաւ (քաջ) կլինի, իսկ ես—Ստանիսլաւ» *։

Ըստ երևութին դա չատ գեղեցիկ է, սակայն մեղայլն ունի և իւր երկրորդ կողմը, որ ստուեր է ձգում յա-

* Կրակովի Ստանիսլաւ եպիսկոպոսի նահատակութիւնն է ակնարկում, որ տեղի ունեցաւ XI-րդ դարում Բոլեսլաւ II-րդ Գոռոզ թագաւորի հրամանով։

նուն միութեան կատարած այս ծառայութիւնների վերայ։ Կարդալով Պաւինակու հրատարակած յիշատակարանները, հիմնուելով սակաւաթիւ ձեռագիր աղբիւրների վերայ, եկեղեցիների միութեան իրագործման ամբողջ ծառայութիւնը (եթէ միայն այդ ծառայութիւն կարելի է համարել) պէտք է վերագրենք երկու համեստ և երջանիկ մարդկանց՝ հայր Գալանոսին և հայր Պիդուին, որոնք միսսիոներական ոգևորութեան և նուրբ զարգացած ոգեզմայլութեան հետ միասին ունէին աւելի ևս նուրբ դիպլոմատիքական ներթափանցութիւն, որ միայն իտալացիներին է յատուկ։ Համարձակ կարող ենք ասել, որ եթէ չլինէր Մարիա-Լիւդովիկէն (Եան-Կազիմիր թագաւորի կինը), որ հերետիկոսութիւնը բնաջինջ անելու համար փափագում էր երկնից արքայութեան արժանանալու, եթէ չլինէր Պինիեատելլի նուիրակը, որ շատ էր վախեցնում էր հայերին թագաւորի բարկութեամբ,—բայց մենք գիտենք, որ հայ գաղթականները շատ էին յարգում այդ ժամանակ Լեհաստանում թագաւորող տոհմը,—միութիւնը երբէք գլուխ գալ չէր կարող։

Ճարպիկ Թէադիենաններն այդ կռուի ժամանակ չուռ էին տալիս Նիկոլին, որ կողմն որ կամենում էին։ Իրաւ է, իւր հովուական թղթերում նա բաւական փառաւոր կերպով էր գրում իւր մասին՝ «ողորմութեամբն Աստուծոյ և առաքելական աթոռանիստ քաղաքի Իլվովի Հայոց արքեպիսկոպոս, հովիւ Հայ ազգի համայն Լեհաստանում և Վալախիայի թագաւորութեան մէջ. սբ. Միքայէլի ասպետ և սբ. Հօր ընթերակայ»,—այսպէս էր նա բեմի վերայ, իսկ կուլիսների ետևում բաւական կերպարանափոխվում էր։ Սիրում էր զեղեցիկ սեռը, «մօտը պահում էր անապատից փախցրած մի կոյս՝ ծագումով չլեախտուհի, պահում էր որպէս իւր օրինաւոր կինը, և լեհերից շատերը կարծում էին, թէ հայ եպիսկոպոսները կարող են ամուսնացած լինել»։ Մինչև անգամ այդ կնոջից երկու արու զաւակ ունէր, որոնք մեծ ազդեցութիւն էին ունենում իրենց հօր վերայ։ Ձիեր էր վաճառում, այն էլ ոչ միշտ բարեխղճութեամբ, կեղեքում էր հոգևորականութիւնն ու ժողովուրդը։ Մի անգամ նա գալիս է Կամենեց, և երբ տեղական ծխականները չեն վճարում նորան ճանապարհածախքը, նա վերցնում է որպէս գրաւ, եկեղեցու արծաթէ անօթները և մինչև անգամ սեղանի աշտանակները, իսկ երբ պատկանելին հատուցանում են, նա դարձեալ չէ վերադարձնում առած գրաւը։ Այդ պատճառով էլ յետոյ, երբ լուր էին առնում, թէ արքեպիսկոպոսը ժամանել է, հայ եկեղեցիներից դուրս էին տանում բոլոր թանկագին իրեղէնները, ագահ սրբազանից և ասպետից թագցնելու համար... Այդ դեռ քիչ է. միութեան գործը գլուխ բերելու ամենատաք ժամանակ, երբ ինքը հրապարակով խօսում էր, որպէս միութեան ջերմ կուսակից, ինքն էլ Կամենեցի ընակիչներից ընդունեց մի քանի հարիւր ոսկի, գրաւոր կերպով կապուելով, որ չի ստիպիլ նոցա «նորամածութիւններն» ընդունելու։

Այս ամէնն այնչափ էլ չէին տրամադրում հերձուածողներին դէպի եկեղեցիների միութիւն տարածողը։ Իլվովի վաճառականները՝ քառասուն տարի կռուելով եկեղեցու դաւանանքների համար, աղքատացել, կորցրել էին իրենց կարողութիւնը։ Մոլեռանդութեամբ կապուած լինելով հին եկեղեցու հետ, նոքա մոռացել էին առևտուրը, անձնատուր էին եղել միայն կրօնական վիճաբանութիւնների, որոնցով լի էր նոցա կեանքն այդ ժամանակ։

Կարդալով հ. Պիդուի յիշատակարանը՝ մարդ զարմացած է մնում, թէ որչափ ճարպիկ էին գործում միսսիոներները խաւարի և սնոտիապաշտութեան դէմ, որ աւելի և աւելի էին բորբոքում Արևելքից նոր եկողները։ Վլադիսլաւ IV-ը՝ տոգորուած լինելով համերաշխութեան սկզբունքներով, թուլացնում էր գաղթականների գլխին թափուող հարուածները, իսկ չլեախտիքական հասարակութիւնն այդ կռուի վերայ բաւականին սառնասիրտ էր նայում։ Սորա կարծիքով, հայերին տրուած արտունութիւնները չէին կորցնում իրենց պարտաւորեցուցիչ ոյժը, այն-

պէս որ վերջ ի վերջոյ միութեան կուսակիցների և լուսաւորչականների մէջ տեղի ունեցող ատենախօսութիւնները պիտի լինէին պաշտօնական կանցլերի ներկայութեամբ, որ դատաւոր էր ընտրուած լինում կռուող կողմերի համար, և նա էր վճռում, թէ որ կողմն էր արդար։

Վլադիսլաւ IV մահից յետոյ գործի վիճակը փոխուեցաւ, այնպէս որ 1665 թ. Իլվովի հայ ծխականները ընդունեցին միութեան դաշնագիրը և հանդիսաւոր կերպով ուխտեցին կատարել։ Ի միխիթարութիւն պիտի աւելացնենք, որ այդ բոլորն եղաւ առանց մի կաթիլ արիւն թափելու։

Սակայն մնում էր Կամենեցը։ Այստեղ գործն աւելի դժուար էր առաջ գնում։ Վերը մենք ասացինք, որ Մեծն Կազիմիր՝ նշանակելով հայոց եպիսկոպոսութիւն, չէր որոշել նորա սահմանները։ Նա մինչև անգամ չէր կարող մտցնել այդ եպիսկոպոսութեան սահմանի մէջ Պոդոլի նահանգը, որովհետև այն ժամանակ այդ նահանգը դեռ չէր պատկանում Լեհաստանին։ Այդ իսկ պատճառով Կամենեցի բնակիչները մի տեսակ կամայականութիւն էին ցոյց տալիս Իլվովի հոգևոր իշխանութեան վերաբերութեամբ, կամ ուրիշ խօսքերով ասած, բոլորովին չէին ընդունում նորան։ Այսպէս, օրինակի համար, Խոտլուբէյը տեղական եկեղեցու հիմնարկութեան թղթում (1498) պարզ ասում է, որ ծխականներին է յանձնում տաճարը «հայը Եանի՝ համայն Ռուսիոյ և Վալախիա երկրի արքեպիսկոպոսի ներկայութեամբ, որովհետև վերոյիշեալ մեր բոլոր գաւառների հոգևոր կառավարիչը այժմ նա է»։ Գուցէ այս Եան (Յովհան) Աւետիք եպիսկոպոսին է յիշում հ. Սադովկ Բարոնչը իւր գրքում, ասելով որ XV դարում նա էր կառավարում Կամենեցը։ Իլվովի այդ ժամանակուայ հայ քահանաների ցուցակում մենք չենք պատահում հ. Եանին և ենթադրում ենք, որ եթէ Իլվովը նորա իշխանութեան ներքոյ լինէր, անշուշտ արտունութեան մէջ յիշատակութիւն կլինէր այդ մասին։

Ուրիշ աղբիւրներից մենք իմանում ենք, որ Կամենեցի բնակիչները հաւատոյ գործերի վերաբերութեամբ աւելի յաճախ Սոչաւ էին դիմում, քան թէ Իլվով։ Սոչաւում հայոց եկեղեցու արարողութիւններն անթերի էին պահպանուած, իսկ Իլվովում փոփոխութիւնների էին ենթարկուած։ Շարունակ փոխվում էին և Կամենեցի բնակիչները. գաղթականների նորանոր հոսանքը միշտ աւելացնում էր նոցա թիւը—այստեղ նոքա կամենում էին իրենց բախտն ու նոր հայրենիքը գտնել։ Այդ իսկ պատճառով հին արարողութիւն պահպանող քահանաները աւելի շուտով այդտեղ էին կուսակիցներ գտնում։ Մելքիսեդեկ կաթողիկոսը՝ փախչելով Իլվովից և հրաժարուելով նորամուծութիւններից, կարճ ժամանակ մնաց Կամենեցում և այդտեղ էլ մեռաւ,—հաւատարիմ մնալով լուսաւորչական եկեղեցու դաւանանքներին։ Մինչև անգամ եկեղեցիների միութիւնը կայացնելուց յետոյ սահմանագլխի ժողովրդի մէջ բաւականին հաստատուն էր մնացել «կեղծ եպիսկոպոս» անուանուած Եան Բեռնատովիչը (1683), թէպէտ պէտք չէ մոռանալ, որ այդ տաճկական կառավարութեան * ժամանակ էր, իսկ մուսուլմանները չէին հետաքրքրվում աղանդների մանրամասնութիւններով։

Աչքի էին ընկնում այդ ազգի Կամենեցի բնակիչները։ Նոցա զարգացման և բարգաւաճման ամենալաւ ժամանակը քանակութեան կողմից, որ ունէր իւր նշանակութիւնը և հարստութեան վերաբերմամբ, XVII-րդ դարի առաջին կէսն էր։ Պաւինակու թարգմանած յիշատակարանների հեղինակը հաւատացնում է, որ այդ ժամանակ Լեհաստանի բոլոր հայերի թիւը 3000 էր։ Սակայն այդ կարծիքը սխալ է, որովհետև՝ երբ թուրքերը տիրեցին Պոդոլիային, հայերի թիւն անհամեմատ աւելի էր։

Վերջումը իւր ճանապարհորդութեան մէջ, որ նկարագրել է դր. Լիսկին և որ կատարուած է համարեա Կամենեցի նուաճման նախընթաց օրը, 3—4 հազար ըն-

* Պոդոլիան գաւառը 27 տարի (1672—1699) տաճկաց իշխանութեան ներքոյ էր։ Ս. Պ.

տանիք է հաշուում և ոչ թէ հոգի։ Նկարագրած ժամանակին նոցա թիւը Կամենեցում հաշուում էին 1200 ընտանիք. արդարև, այդ ամենաբազմամարդ և հարուստ գաղութն էր ամբողջ Լեհական Հանրապետութեան մէջ։

Քաղաքի ահագին մասը (համեմատութեամբ ուրիշ բնակչութիւնների հետ) հայերին էր պատկանում։ Այժմեան նահանգապետի հրապարակը նորա փոքրագոյն մասն էր, այնպէս որ այն բաւականաչափ մեծ շինութիւնը, որ գտնվում է Պաղոլիան տիրապետողների պալատի կողքին (որ կառուցուած է միայն անցեալ XIX դարում), հայկական շուկայի կենտրոնն է կազմում. դա երկու յարկանի քարէ տուն էր, այդտեղ էր խորհրդարանը, ուր վճռվում էին կարևորագոյն գործերը։ Ճակատը, որ զարդարուած էր պատշգամով և ունէր յարմար նստարաններ, մի տեսակ բորսա էր։ Տեղական վաճառականներն այդտեղ էին դին նշանակում արևելքից բերած ապրանքներին, և այդ գները նշանակութիւն ունէին ոչ թէ մի քաղաքի, այլ ամբողջ Լեհաստանի, նաև Ռուսիայի համար։ Այդ երկայն շուկան, որ շրջապատուած էր բարձր տներով և պահեստներով, զարդարուած էր չորս եկեղեցիներով. արևմտեան կողմում ս. Համբարձման եկեղեցին էր, ուր այժմ մասնաւոր մարդու տուն է. դա մի փայտէ շինութիւն էր, որ աւերուեցաւ տաճիկների ռմբակոծութեան ժամանակ։ Հարաւ-արևելեան կողմում ս. Ստեփանոսի եկեղեցին էր, որ այժմ մասնաւոր մարդու սեպհականութիւն է։ Շուկայի արևելեան կողմում ս. Միքայէլի եկեղեցին էր և մի փոքրիկ, կարծես թէ նորա ետևից կպցրած, եկեղեցի էլ Ամենասուրբ Կոյսին Մարիամու, ուր մի ընդարձակ գերեզմանատուն կար։ Սովորաբար այնտեղ 12—20 քահանայ էր լինում, թէպէտ 1686 թ. հ. Պիդուն միայն 7 քահանայ է տեսնում։ Մի քանի տասնեակ վարդապետ է եղել միայն և 12 կոյս, որոնք, ինչպէս ասում է վերոյիշեալ հեղինակը, անունով էին միայն կոյս, իսկ չորերով համարեա բոլորովին չէին զանազանվում աշխարհիկ կանանցից։ «Նոքա ապրում են

առանց կանոնադրութեան, մի մեծ բաց տան մէջ, որ եկեղեցուն էր պատկանում, և իրենց արձակ կենցաղավարութեամբ, ծանօթութիւններով, առևտրով վատ ազդեցութիւն էին ունենում»։ Ս. Նիկողայոսի եկեղեցին ամենագեղեցիկն էր։ Մի փոքրիկ հրապարակի վերայ էր կառուցուած և երեք կողմից պատած էր սիւնազարդ գաւթով. նա զանազանվում էր իւր բիւզանդական ոճի աչքի ընկնող գծերով։ Գաւթը ծածկուած էր խսիրով, և ամառուայ արևակէզ շոգերին այդտեղ էր քաղաքի ամենածերը կայացնում իւր ժողովները, այդտեղ էին վճռվում հոգևոր հարցերը, իսկ ազատ ժամանակը, պարապ միջոցին մինչև անգամ առևտրով էին պարապում։

Հետաքրքրական է Լեհաստան գաղթած հայերի բնաւորութեան նկարագիրը, որ անում է Վերդումը. «Նոքա իրենց հեռու են պահում լեհացիներից և ուրիշ բնակչութիւններից ու կրօններից, ինչպէս հրէաներն են անում, սակայն հայերը նոյնչափ գոռոզ ու հպարտ են, որչափ հրէաները չնչին են ու ստորաքարշ։ Իրենց յիմար կարմրաթուշ երեսից՝ դուրս ընկած հպարտ աչքերով, նոյնչափ դիւրին է նոցա զանազանել ուրիշ մարդկանցից, որչափ և հրէաներին իրենց վտիտ ու գունատ դէմքից։ Նոքա հաղիւ են ամուսնանում օտարների հետ, որոնք իրենց ազգային հաւատին չեն պատկանում, և նոքա էլ ամենահարուստ ու ճարպիկ վաճառականներն են իրենց երկրում»։

Քիչ չէին Կամենեցում հայ ազգատոհմեր, որոնք այսպէս կամ այնպէս նշանաւոր և անուանի էին։ Ամենից առաջ Զերվոննաեա Ռուս եկած «խաչակիրներն», այսինքն ասպետների թուին էին պատկանում Թէոդորովիչները և Սուլթանները։ Նոցա մի ճիւղը տեղափոխուեցաւ Լիթուական Պոլէսիէ ու Լիթուա և այդ ազգատոհմը այնտեղ բազմաթիւ սերունդ տուաց։ Ցայտնի է, որ Լեհական Հանրապետութիւնը հայ «խաչակիրներին» տոհմական ազնուականներ ճանաչէց։ Դեռ XVII դարի սկզբում շնորհատուութեան իրաւունք ձեռք բերածների թուին էին պատ-

կանում Աւագները, որ յետոյ յայտնի էին Զակովսկի ազգանունով, Սեֆերովիչները կամ Շագիները և Կրիստոֆովիչները։ Պատուաւոր քաղաքացու կոչման արժանացել էին՝ Ագոպոսները (Ագոպսովիչները), Աթաբէկները (Աւգուստինովիչները), Աքսէնտովիչները, Բողդանովիչները, Սոսպոպները, Գաբրուրիզովիչները, Պօղոսները, Բուդաղովիչները, Եանովիչները, Տօնապետովիչները, Քերեմովիչները, Լապինովիչները, Միսբրովիչները, Մուրատովիչները, Վարդերեսովիչները, Զախնովիչները, Լազարեւիչները, Բալովիչները (յետոյ եղան Բալիցկի), Ասլանովիչները, Շիմոնովիչները, Վասկոները, Ռոչկոները, Վարչիկները, Գաբրիելովիչները և շատ ուրիշները։

Այս տոհմական պատուաւորներն իրենց միջից ընտրում էին քաղաքային պաշտօնական անձինք, որոնց թիւը քիչ չէր. վոյթ, կամ պրէտոր և կամ պրոկոնսուլ (դերհիպատոս), 8 ռայց (մագիստրատի անդամ) կամ կոնսուլ (հիպատոս), որոնցից աւագը երէցփոխան էր կոչվում և, այսպէս ասած, քաղաքային դատարանի փոխ-նախագահն էր։ Սորա հետ միասին կային և քառասուն «հաւատարմատար մարդիկ» (դատաւորներ), որոնք ունէին իրենց նախագահը։ Մի այդքան էլ ընտրվում էր և հասարակ մարդկանցից՝ «ժողովրդի բարի, հաւատարիմ և ունեւոր մարդկանցից»։ Նոցա ցուցակը նախագահն էր կազմում, և ամեն տարի ս. Մատթէոսի նախատօնակին «հաւատարմատար մարդկանց» հետ միասին ձեռնարկում էին վոյթի և նորա օգնականի ընտրութեան, նաև եկեղեցու համար երէցփոխան, թագաւորին և կաթողիկոսին ներկայանալու համար պատգամաւորներ և այլն էին ընտրում։ Այնու ամենայնիւ նոցա այդ իրաւունքը մի քիչ սահմանափակուած էր. ընտրութիւններից առաջ ընտրողների ցուցակը նայում էր պրէտորը կոնսուլների հետ միասին, և սոքա իրաւունք ունէին ցուցակից հանելու այն մարդկանց անունները, որոնց չէին հաւանում։ Այսպէս, այն տասն հոգիները, որոնք հեռանում էին վարչական ասպարիզից, դեռ ևս կարող էին ազդել նախագահողի և

ընտրութիւնները ղեկավարող մարդկանց վերայ։ Այս օրէնքը վերջնական հաստատութիւն ստացաւ 1635 թ. Վլադիսլաւ IV թագաւորի օրով։

Ընտրուած պաշտօնական անձինք կառավարում էին բնակիչներին ու եկեղեցին։ Եկեղեցին նոյնպէս նոցա էր հպատակ. եկեղեցապատկան կալքերի, տաճարների վերանորոգութեան և եկեղեցական արարողութեան պայծառութեան համար ամեն մի անհրաժեշտ պիտոյք հոգացողը հոգաբարձուների գլուխը՝ երէցփոխանն էր։ Նորա հսկողութեան ներքոյ էին երաժշտութիւնը, երգեցողութիւնը և մատաղի կենդանիները։

Հայ քահանան սովորաբար պսակուած էր լինում և ինքը մենակ էր կատարում ամեն մի ծիսակատարութիւն, որովհետև աբեղաները և վարդապետները՝ ամուրի լինելով, այդ իրաւունքը չունէին, թէպէտ, միւս կողմից, աբեղան կամ վարդապետն ամուսնանալով առանց դժուարութեան կարող էր քահանայ դառնալ։

Մեծ յարգանք էին վայելում հայ եկեղեցու պաշտօնեաները. նախ և առաջ նուիրակը, այսինքն պատրիարքի ներկայացուցիչը, որ ամեն տարի ուղարկվում էր Էջմիածնից։ Սովորաբար նա առաջուց մարդիկ էր ուղարկում և յայտնում իւր գալու մասին, և յետոյ ամբողջ քաղաքը հոգևորականների առաջնորդութեամբ առաջն էր գնում, աղաղակներով, երգերով ողջունում նորա գալուստը, մինչև անգամ պարում էին, որ այստեղ ուրախութեան մի առանձին նշան էր։

Նուիրակը՝ երկայն վարդապետական չոր հագած, թափառականի ցուպը ձեռին, հանդիսաւոր կերպով քաղաք էր բերվում և տեղաւորվում եկեղեցապատկան տներից մէկում, իսկ հետևեալ օրը նա սկսում է իւր գործն աղօթքով. յետոյ դուրս էր գալիս հրապարակ, անցնում փողոցները և հրաւիրում ժողովուրդը նուիրարերութիւն անելու յօգուտ պատրիարքի։ Արևելեան էֆֆէկտներով, արտասուալի ձայնով նա նկարագրում էր եկեղեցու պետի կարիքները, աւելացնելով որ՝ եթէ չհատուցանուի

պարսիկներին ու տաճիկներին սահմանուած տուրքը, Մայր Աթոռը, նորա հետ միասին և սրբութիւնները, հրաշալի Շողակաթ տաճարը գետնի հետ պիտի հաւասարուին...

Կամենեց-Պոդոլսկի այժմեան բնակիչները չեն կարող մինչև անգամ երևակայել, որ փողոցներում մի այդպիսի հիւր կարող է լինել։ Մինչդեռ երկու հարիւր տարի առաջ այդ սովորական երևոյթ էր և ընտելացել էին նորան։ Ցիշում ենք, չլեխտիչներից մէկի յիշատակարանում մենք կարդացել ենք. «Եկաւ Նոցա (հայերի) քահանան Արևելքից և ողորմութիւն էր խնդրում»... Նուիրաբերութիւններն, երևի, առատաձեռն էին լինում, որովհետև երբեմն նուիրակների փոխարէն իրենք կաթողիկոսներն էին Լեհաստան գալիս, իսկ Նոցանից երկուսը՝ Ստեփանն ու Մելքիսեդեկը, հրաժարուելով հայրենիքում բարձր պատիւներից, բաւականացան Իլվովի եպիսկոպոսը լինելու համեստ աստիճանով։

Նուիրակներից յետոյ յիշատակութեան արժանի են այսպէս ասած Անարծաթները, այսինքն աբեղաները կամ գիւղական աստուածաբանները։ Սոցա կոչումն էր գիւղէ գիւղ շրջել և քարոզել ժողովուրդը, նոքա արծաթ չէին ստանում, այլ միայն կերակուր ու հագուստ և դորա փոխարէն զանազան նախապաշարմունք էին տարածում, գրգռում էին սնոտիապաշտ ժողովուրդը։ Սովորաբար նոքա համայիլ էին բաժանում, այսինքն պահպանող թղթեր,— երկար նեղ թղթի կամ մագաղաթի կտոր՝ զարդարուած միստիկական նշաններով և պէս պէս գրութիւններով։ Տգէտ հայը կախում էր այդ համայիլը վզից, համոզուած լինելով, որ ազատ պիտի մնայ դժբաղդութիւններից, սատանայից և այլն...։ Բայց պէտք է իմանալ, որ վախկոտ դաղթականներին շատ չուտ չուտ էր վախեցնում սատանան. լերբ դէր յանդգնութիւն էր ունեցել իւր իսկական կերպարանքով մինչև անգամ Նիկոլ Թորոսովիչին ներկայանալ, չնայելով որ երկիւղած եպիսկոպոսը միշտ գրպանում ունէր պահած ս. Գրիգոր Լուսաւորչի մատը։

Եւ առհասարակ, եթէ հաւատալու լինինք պատմութիւններին, Կամենեցի դէն ամենայամառն էր, չէր ենթարկվում չ մի հմայութեան։ Որքան էր նա զզուեցնում սրբազանին, երբ սա սահմանագլուխները հռոմէական եկեղեցու հետ միացնելու գործի համար էր աշխատում. նամանաւանդ նա ծաղրում էր գերապատիւ եպիսկոպոսի խեղճ փոքրաւորին, նորա հաւատարիմ ծառային...

Բայց հայոց եկեղեցու ամենաբարձր աստիճանը բարձրագոյն աստուածաբանութեան դոկտորի կամ վարդապետի աստիճանն էր, որ առանց կաթողիկոսի լիազորութեան իրաւունք ունէր հրապարակով նզովելու եպիսկոպոսներին։ Վարդապետը պիտի ունենար խօսելու ձիրք և երգեցողութեան ուսուցիչ լինէր։ Այս արևելեան գիտնականները, որ էջմիածնի ճեմարանի արդիւնք էին, յաճախ էին գալիս Լեհաստան, բայց երբեմն-երբեմն էին մտնում Կամենեց։ Սև լոդիկ հագած, գլխին սրածայր վեղար (cucullum) դրած, մերկ պարանոցով, ահագին ցուպը ձեռին, որի ծայրն ի նշան նոցա բարձր պաշտօնի երկճիւղ էր, եկեղեցիներում և մարդաշատ հրապարակներում դուրս էին գալիս քարոզելու և ճառեր ասելու։ Հասարակական կարծիքի ղեկավար հանդիսանալով նոքա հարստահարում էին ժողովուրդը յօգուտ ծայրագոյն պատրիարքի։ Սոքա էլ ամենից շատ էին հակառակում հայոց եկեղեցու միութեանը հռոմէականի հետ։

Այդպիսի վարդապետներից մէկի մասին և մենք կամենում ենք մի փոքրիկ պատմութիւն առաջ բերել։

ՎԱՐԴԱՊԵՏ

1660 թ. էր։ Կամենեցի գաղթականները խումբ խումբ դիմում էին դէպի Խոտինի ճանապարհը, անհամբերութեամբ սպասելով երկու հիւրի, որոնց գալու մասին վաղուց արդէն ծանուցուած էր. դոքա արևելեան իմաստութեան երկու վառ աստղեր էին՝ Կրիստոֆ Զիմոնովիչ և Եան Գրիգոր Մուրատովիչ։ Դոցանից առաջինը նշանաւոր լեզուագէտ էր, հասկանում էր աշխարհիս համարեա բոլոր լեզուները։ Երկրորդը յայտնի վարդապետ էր, հմուտ ճարտասան և երգիչ, շատ բարեպաշտ և նախահայրերի կրօնքին հաւատարիմ մի մարդ։ Երկուսն էլ հայրենիք էին վերադառնում, որովհետև ցերեկուայ լոյսը տեսնելու նորա արժանացել էին Կամենեցում, իսկ Էջմիածնում միայն գիտութեան լոյսն էին ստացել։

Երկար էր նոցա ճանապարհորդութիւնը և վտանգաւոր. սուրբ քաղաքից (յիշեցնենք ընթերցողներին, որ այդ քաղաքը Կովկասումն է և Երևանից ոտով գնալու մի ժամ (?) տարածութիւն հեռու։ Սև ծովի ափերով պէտք էր գնալ մինչև Ստամբոլ,

այն տեղից մինչև Խոտինեան Ռախսը կարաւանով կամ այն *շաուշի* պաշտպանութեան ներքոյ, որ ուղարկվում էր Խոտինի փաշայի մօտ։ Բայց որովհետև կարաւաններ յաճախ չէին գնում և Դիւանն էլ շաուշներ շատ յաճախ չէր ուղարկում, ուստի երիտասարդներն օգտուեցան Տաճկաստանի մայրաքաղաքում գտնուելուց. նոցանից մէկն ուսուցանում էր, իսկ միւսը՝ ինքն էր ուսանում։ Զիմոնովիչն՝ աղքատ ընտանիքի զաւակ լինելով և մանրավաճառութեամբ պարապելով Կամենեցում, ծարաւի է լինում գիտութիւնների և ամենից առաջ իրեն նուիրում է արևելեան լեզուների ուսումնասիրութեան։ Նորանից լաւ ոչ ոք այնպէս—հիմնովին չգիտէր հայոց գրականութիւնը (այդ Պիդուն ևս խոստովանում է), որ բոլորովին տարբերվում է Լեհաստանի դաղթականների խօսակցական բարբառից։ Նոցա մէջ մօտաւորապէս այնպիսի զանազանութիւն կար, ինչպէս լատիներէնի և իտալերէնի մէջ, և, բացի դորանից, հայերի խօսակցական լեզուի մէջ պարսկերէն, տաճկերէն, թաթարերէն, ռուսերէն, լեհերէն և մինչև անգամ եբրայեցերէն բազմաթիւ խօսքեր կային։

Մուրատովիչը պատկանում էր Կամենեցի ազնուական դասակարգին։ Նորա Սեֆեր պապը Պարսկաստան էր գնում Սիգիզմունդ III-ի համար ակնեղէններ գնելու։ Իւր առաքելութիւնը նա լաւ էր կատարում, վաստակել էր շահի բարի տրամադրութիւնը և դորանով էլ արժանացել էր իւր թագաւորի բարեմտութեան։ Վարդապետի մեծ եղբայրը յայտնի վաճառական էր և կոնսուլ Կամենեցում։

Սեպտեմբերի վերջին Կամենեցի բնակիչներն

արժանացան իրենց ճանապարհորդների տեսութեան։ Բնակիչներն այս դէպքի առթիւ այնչափ էին ոգեորուել, որ կամենում էին երկու համեստ երիտասարդների քաղաք ժամանելու միջոցին եկեղեցիների զանգերը տալ. նոցա ուղեկցում էր միայն մի կիսամերկ տղայ, որ նստած էր մոլգաւական մնաժում՝, ուր նոցա աղբատիկ իրերն էին տեղաւորուած... Սակայն հոգաբարձուներն ընդդիմացան երկրպագութեան անհամապատասխան մի այդպիսի արտայայտութեան. լուռ էին զանգերը, բայց կանայք, բնական հետաքրքրութիւնից դրդուած, գոյնզգոյն պսակներով շրջապատեցին եկուորներին և տարան ազգականների հիւրընկալ տները։

Նոցա յաղթական գնացքը ցոյցի բնաւորութիւն էր կրում։ Լուսաւորչական դաւանութեան կողմնակիցները նորեկ վարդապետներին նեցուկ էին համարում, մինչդեռ միութեան պաշտպանները, տրամադրուած չլինելով դէպի հիւրերը, աշխատում էին նսեմացնել հանդիսաւորութիւնը։ Բնակիչներից տղամարդիկ անտարբեր և չէզոք էին վերաբերվում նոցա, իսկ կանայք բարձրաձայն արտայայտում էին իրենց ուրախութիւնը։

Այսպէս անցաւ մի քանի օր։

Բայց ահա լուր է տարածվում, թէ վարդապետը քարոզ է խօսելու մայր եկեղեցում։ Հետաքրքրութիւնն հասաւ իր գագաթնակէտին։ Վաղ առաւօտեան սկսել էին արդէն լցուել եկեղեցին։ Սա շինուած էր այն ժամանակ Արևելքում ընդունուած ձևով։ Եկեղեցու լայնութեամբ շինուած էր մի վանդակ, որ նորան երկու մաս էր բաժանում. առաջին

մասը, մուտքից, որ աւելի ցած էր, նշանակուած էր կանանց համար, իսկ երկրորդը, որ աւելի բարձր էր, բեմի մօտ, քահանաների, երգեցիկ խմբի և այլ մարդկանց համար էր։ Ժամասացութիւնը բաւական երկար տևեց։ Պատարագի արարողութիւնից յետոյ սկսեցին կարդալ զանազան կտորներ Յայսմաւուրքից, իսկ ապա՝ երգել։ Սկսեց վարդապետը մենակ, բայց յետոյ շարունակեց երգեցիկ խումբը։ Երգեցին հատուածներ շարականից, և ոգեորուած հաւատացեալները ձայնակցում էին խմբին, այնպէս որ այդ տնկանոն բղաւոցի մէջ կորաւ վարդապետի ձայնը. այնու ամենայնիւ պնդում էին, թէ նորա մէջ մի ինչ որ քերովբէական բան կար։

Ահա և երգեցողութիւնը կտրուեց. նշան տուին... Վարդապետն սկսում է իւր քարոզը։ Նա մօտեցաւ վանդակապատին, որ անջրպետում էր տաճարը, և, կիսով չափ թեքուելով դէպի կանանց կողմը, աշխոյժ շարժումներով սկսեց նկարագրել իւր թափառելը, եկեղեցու ողբալի վիճակը Մեծ Հայքում, յայտնեց ժողովրդին կաթողիկոսի օրհնութիւնը և նորա խընդիրը, որ հաստատ մնան ս. Լուսաւորչի աւանդած հաւատին և դաւանանքին։ Քարոզում նա յիշեց, որ Իլվովի ժողովուրդը տրամադրուած և հակուած է դէպի նորամուծութիւնները, որոնք կարող են կերստաբեր ազդեցութիւն ունենալ Լեհաստանի սահմաններից դուրս ապրող իրենց եղբայրակիցների վիճակի վերայ։

Քարոզի սկզբում ունկնդիրներին տիրած խորին լռութիւնն այժմ փոխուեցաւ հաւանութեան և համաձայնութեան բարձրաձայն արտայայտութեան։ Փանատիկոս, յուզուած ժողովուրդն այդ վայրկեանին նա-

հատակուելու պատրաստ էր։ Սակայն քարոզչի ոգևորութիւնն ըստ երևոյթին թուլացել էր. հազիւ հազ էր նա հատուածներ բերում ս. գրքից, խօսքը կտրում էր, կարծես, խիստ զբաղուած լինէր ուրիշ բանով, կարծես, ուշքը վրան չլինէր։ Եւ արդարև, նորան դաղել էին մի զոյգ սեռակ աչեր, որ կրակոտ հայեցուածքով հարուած էին տուել նորա սրտին։ Անջրպետից ոչ հեռու կանգնած էր մի կին, որ այնքան էլ երիտասարդ չէր, բայց յարգանք ներշնչող. դա Եղիսաբէթ Սեֆերովիչն էր, Կամենեցում գտնուող հայազգի կուսաստանի մայրապետը։ Ինչպէս արդէն մեզ յայտնի է, այդ կոյսերն առանձին եկեղեցի, անապատ չունէին։ Մայրապետն արժանացել էր եկեղեցու առաջին աստիճաններին, չունէր միայն քահանայականը, որովհետև եկեղեցին կանանցից քահանաներ չէր ձեռնադրում։ Մոլեռանդ կերպով կապուած լինելով հին եկեղեցական արարողութեան հետ՝ նա կամենում էր իւր ամբողջ ընտանիքը ժողովել նորա դրօշակի ներքոյ, ամենքին նուիրել Աստուծու սպասաւորութեան։ Նորա ազդեցութեան շնորհիւ մեծ աղջիկն ու երկու թոռը կուսական փարաջայ էին հագել, իսկ փոքրիկը՝ տասնեվեց տարեկան Դովլաթն, աշխարհական զգեստով կանգնած էր եկեղեցում մօր կողքին և միամիտ բերկրութեամբ լսում էր երիտասարդ վարդապետին։ Եւ ահա այդ օրիորդի սև աչերն էին ազդել արևելցի վարդապետի ճարտասանութեան զեղուն ընթացքի վերայ։ Սակայն քարոզն ամբողջ երկու ժամ տևեց։

Դորանից յետոյ տեղի ունեցաւ մի նոր, արտասովոր հանդէս. զոհաբերութեան, մատաղի ծէսը,

որ հայերը վերցրել են հրէաներից։ Երկու մարդ տաճար բերին ահագին մեծութեան մի եզ. վախեցած կենդանին զարդարուած էր գոյնզգոյն ժապաւէններով, որ կապել էին պոզերից, որոնց վերայ էլ զանգուլակներ էին ամրացրած։ Պոզերի վերայ վառ մոմեր էին տնկած, իսկ մէջքը ծածկուած էր մի սիրուն գորգով, զարդարուած ոսկէ նախշերով և չորս կողմից թանկագին կտորով կարած։ Աստուծուն զոհ նշանակուած եզը դանակով մորթում էին, իսկ նորա թարմ միսն օրհնուած կրակով խորովում էին սեղանի վերայ և բաժանում ժողովրդին։ Այս անգամ հանդէսը գլուխ չեկաւ։ Զարհճներից մէկը եկեղեցու մօտ հրացան արձակեց —վախեցած եզը դուրս պրծաւ, ցիր ու ցան արեց չփոթուած կանանց, իրեն համար ճանապարհ բաց արեց և եկեղեցուց դուրս փախչելով՝ սկսեց կատաղի կերպով վազվզել քաղաքում, յետևից ցեխի մէջ քարշ տալ գորգը... Եւ այդ մեծ զուարճութիւն պատճառեց լեհ և ռուս ամբոխին։ Փողոցի տղաները ծափ տալով զոռում էին.—ահա՛ հայոց սուրբ եզը...

Սակայն վերադառնանք Մուրատովիչին։ Նորա գալուստն ու յաճախակի քարոզները արծարծեցին դիւրաթեք և անտարբեր դաղթականների ֆանատիկոսութիւնը և ամրացրին նոցա կապը դաւանական մոլորութիւնների հետ։ Այս շարժման գլուխն էր անցել վարդապետի հետ և Սեֆերովիչ կոյսը, որ քաղաքում քիչ ազդեցութիւն չունէր։ Իլովից ուղարկուող կարգադրութիւններն այլ ևս չէին կատարվում, և կրօնական հարցերի վերաբերմամբ Կամենեցն սկսեց դիմել Խոտին, ուր հայ լուսաւորչա-

կան եպիսկոպոսն էր։ Իլովից դժգոհները, ինչպէս օրինակ հ. Բրզոսկին, որի մասին յիշում է և հ. Պիդուն, և մի քանի անդրդուելի վարդապետներ ապաստան և հիւրընկալութիւն գտան Կամենեցում։

Երիտասարդ վարդապետը, ինչպէս ամենքն ասում էին, սիրահարուած էր գեղեցիկ Դովլվաթի վերայ։ Արդարև, նա գեղեցկուհի էր։ Սեֆերովիչների սերունդը հռչակուած էր իւր արտասովոր գեղեցկութիւն ունեցող կանանցով, իսկ վարդապետը շատ մեղմ սիրտ ունէր։ Ցաճախակի հրաւիրուելով մայրապետի մօտ խորհրդածութիւնների համար, նա միշտ այնտեղ պատահում էր և այդ օրիորդին։ «Վարդապետը, —ասում է տարեգիրը,—պատրաստվում էր քահանայութիւն ընդունել, որպէս զի ամուսնանար օրիորդի հետ, որովհետև եղել են դէպքեր, ինչպէս ծերերն են պատմում, երբ վարդապետներն ամուսնացած հոգևորական են դարձել... Նա մինչև անդամ իւր անկողինն արդէն եկեղեցի էր տարել, որ այնտեղ 40 օր աղօթէր, ապաշխարէր»։ Սակայն աղջկայ մայրը չէր համաձայնել, որ ամուսնութիւնը կայանայ։ Մայրն ուրիշ բան ի նկատի ունէր. նորա նպատակն էր աւելի ամրապնդել բայբայուող հաւատը—յամառութեամբ և հաստատուն կերպով կռուել մինչև վերջ և հին սովորութիւններից և ոչ մի բայլ չհեռանալ։ Իւրայինների շրջանում նա նկատում էր անտարբերութիւն և ոչ մի յարգանք դէպի այդ աւանդութիւնները, որ սուրբ էին իրեն համար։ Եւ այրի կնոջ ֆանատիկոսութիւնը խոշընդոտների պատճառով աւելի էր սաստկանում, սովորական սահմաններից դուրս էր գալիս։

Երկու եկեղեցիների միութեան պատմութեան ասպարիզում, ուր աւելի շատ խորամանկութիւն և խարդախութիւն էր գործադրվում, քան թէ եռանդուն ընդդիմադրութիւն, այդ կինը խիստ աչքի է ընկնում. նա կանգնած է անդրդուելի, բողոքում է բարձրաձայն մինչև ի մահ։ Ինչպէս կարող էր նա փորձութեան և աշխարհային գայթակղութեան յանձնել իւր աղջիկը, որ Աստուծուն էր նուիրուած։ Մուրատովիչը մերժումն ստացաւ, բայց և այնպէս ֆանատիկոս պառաւի կողմնակիցը մնաց, և յայտնի չէ, թէ այդ կռիւն ինչով կըվերջանար, եթէ 1662 թուին Դովլաթը չմեռնէր։ Նորա մահից յետոյ անմխիթար վարդապետը հեռացաւ աստուածաբանական վէճերից։ Նորա լեզուագէտ Զիմոնովիչ ընկերը՝ որ միութեան ջերմ պաշտպան էր, համոզեց դժբաղդ սիրահարին թողնել Կամենեցը, և երկուսը միասին Իլով գնացին։ Մուրատովիչի հեռանալով լուսաւորչականները կորցրին վիճաբանական ասպարիզում մի փառաւոր ոյժ, որ իւր ատենաբանութիւններով անպարտելի էր—այդ իսկ վայրկեանից հայերի գործը տարուեցաւ...

Կրօնական տարաձայնութիւնների վերջնական լուծման ժամանակը մօտենում էր։ Լեհական Հանրապետութեան բոլոր հայ գաղութները հպատակուեցան Իլովի արքեպիսկոպոսին։ Կամենեցն էլ հպատակուեցաւ՝ միայն առ երեսս,—իրօք նա դաւանում էր նախկին կրօնը։ Տեղական լատին հոգևորականութիւնը շարունակ տեղեկութիւններ էր հաղորդում Թորոսովիչին Կամենեցի ոչխարների ազանդի և «կռապաշտութեան» մասին։ Այդ տրտունջ-

ներին ու գանգատներին հովիւը լռութեամբ էր պատասխանում, որովհետև, ինչպէս մենք գիտենք, ներողամիտ լինելու համար նա բաւականին կլորիկ գումար էր ստացել, սակայն հերետիկոսութիւնը վերջնականապէս արմատախիլ անելու համար Հռոմից ուղարկուած երկու Թէադինեանները չէին կարող անտարբեր լինել դէպի հայերը։

Նոցանից մէկը, հ. Կղեմենտիոս Գալանոսը, ամենավճռական բոպէին յանկարծ մեռաւ՝ մի քանի օր հիւանդ լինելուց յետոյ. մնաց մենակ հ. Պիդուն, սակայն սա չվախեցաւ դժուարութիւններից։ Երկար ժամանակ աշխատանք և ճիգ թափելուց յետոյ նա ստիպեց Թորոսովիչին և նորա օգնական Քերեմովիչին սահմանները գնալ։ Օգոստոսին նորա արդէն Կամենեցի պարիսպների մօտ էին։

Բարեպաշտ Թէադինեանը բաւական հետաքրքրաշարժ կերպով է պատմում այդ առաքելութիւնը։

«Ժողովուրդը,—ասում է նա,—մի քանի մղոն եպիսկոպոսի առաջը գնաց. ճանապարհը լի էր թանկագին սայլերով և կառքերով. հետեւակներ էլ քիչ չէին։ Բազմաթիւ ողջունական ճառեր ասուեցան։ Լատին հոգևորականութեան ներկայացուցիչները լատիներէն ճառով դիմաւորեցին նոցա. բնակիչների պատգամաւորները—թուրքերէն. Իլովի կոլէգիումի աշակերտները, հ. Պիդուի սաները, որոնք արքեպիսկոպոսի հետ էին, ողջունական ճառերին հայերէն պատասխանեցին, գրաբառ լեզուով, որ սաստիկ ուրախացրեց տեղական ազնուականներին»։

Մայր եկեղեցու զանգակները բարձր զողանջում

էին, երբ փարախի հովիւը նորա կամսրների տակը մտաւ. երգիչների ներդաշնակ խումբն ուրախ օրհներգով ողջունեց, երաժշտութիւնն էլ ձայնակցում էր խմբին... Մեծ էր ծխականների ցնծութիւնը,—համարեա պարելով էին ուղեկցում ճանապարհորդներին. միայն կանայք քիչ էին հաւաքուել տաճարի ներքին կիսում, և սոցա թուում ոչ միանձնուհիք կային, ոչ էլ Սեֆերովիչը։

Երեկոյեան ժամասացութիւնը կատարեցին լատինական կարգով. սկիզբը յաջողուեցաւ։ Բայց հետեւեալ օրը նորամուծութիւններ անողները խոչընդոտների հանդիպեցին։ Տեղական քահանաները չէին կամենում հռոմէական եկեղեցու կարգով պատարագ մատուցանել, առարկելով թէ չեն իմանում։ Սակայն եպիսկոպոսը զիջանելու միտք էլ չունէր։ Երկար ու բարակ վիճաբանութիւններից յետոյ երկու կողմն էլ համաձայնութիւն կայացրին մի քանի օրով հարցն առկախելու։ Այդ մասին առանձնապէս աշխատում էր հ. Պիդուն, որ ամեն մի բոպէ թուղթ էր ստանում Թադաւորից։ Եւ արդարև, թուղթ ստացուեցաւ, բայց այնտեղ ոչ մի խօսք չկար հայերին բռնի միացնելու մասին։ Այս որ իմացան հայ գաղթականները, գլուխները վեր բարձրացրին...

Սակայն գլխաւոր դրդիչը, որ յորդորում էր նոցա ընդդիմադրելու, կին էր։

Ոչ այնքան սիրելի արքեպիսկոպոսի գալուց մի քանի օր անցած՝ ուշ գիշերով, գաղթականութեան աւագները հաւաքուեցան Վասկո դատաւորի մօտ։ Սա միջին հասակի, խաղաղ բնաւորութեան, անտարբեր դէպի հաւատի վերաբերեալ հարցերը, ա-

ւելի տուր և առին անձնատուր մի մարդ էր՝ պսակուած Սուլտանա Սեֆերովիչի՝ մեզ արդէն ծանօթ հայ միանձնուհիների մայրապետի աղջկայ հետ։ Հաւաքուածների մէջ կային մի քանի ռայց, այն է՝ Վարդան Մուրատովիչ, որ նոյնպէս վաճառական էր, բայց մեծ ջատագով նորամուծութիւնների. նա իւր որդուն տուել էր լեհական Կազիմիր անունը և կըրթութեան համար ուղարկել էր յիսուսեանների կոլեգիան։ Հայր ու որդի հաշտութեան տարբեր էին հանդիսանում, բայց միւս ներկայ գտնուողները՝ Նախագահ Ցարժիկ Կրիստոֆիչը, որ աւելի քան երեսուն տարի «հաւատարմատար մարդկանց» պարագլուխն էր, յետոյ Միկլոշ Գոլուբովիչը, Ասուադուր Եարոշը, Իսայ Տէր-Աբրամովիչը, Գրիգոր Աբսենտովիչը կուսակից էին նախահայրերի հաւատին իւր բոլոր մեղանչութիւններով ու մոլորութիւններով հանդերձ, որ սակայն դատապարտուում էր նոյն խսկ Էջմիածնի իշխանութեան կողմից։

Պատուաւոր մարդկանց հետ, որոնք ազգի բաստն էին վճռում, այդտեղ ներկայ էին գտնվում երկու երիտասարդ, որ մեզ լաւ ծանօթ են.—Կրիստոֆ Զիմոնովիչը և Եան (Յովհաննն) Գրիգոր Մուրատովիչ պատուական հայը սուրբը։ Մուրատովիչը սաստիկ փոխուել էր. ճիշտ է, նա թէև տխրադէմ և լուռ էր մնացել, բայց աւելի եւրոպական տեսք ունէր։ Վարդապետական շորով էր, բայց ոչ վեղար էր դնում և ոչ գաւազան կրում, որ բարձր աստիճանի նշաններ են։ Իլվովում անց կացրած չորս տարին քիչ ազդեցութիւն չէր արել նորա վերայ. նա համոզուեցաւ, որ միութիւնը վաւերացնում է այն

պարտաւորութիւնները, որ առաջուց ընդունել էին ս. Գրիգորի հետևողները։ Այդ պատճառով էլ նա սկսեց մեղմ, բայց համոզեցուցիչ կերպով ապացուցանել իւր եղբայրակիցներին, թէ նորա մեղանչում են Աստուծոյ դէմ, ընդդիմադրութիւն ցոյց տալով արքեպիսկոպոսին։

Ժողովը խռովայոյզ և աղմկալի էր, ինչպէս սովորաբար լինում է արևելցի մարդկանց ժողովը։ Անյայտ հեղինակը, որի ձեռագրից մենք օգտվում ենք, 30 տարի անցնելուց յետոյ է նկարագրել այդ ժողովը աստուածաբանին յատուկ բոլոր նրբութիւնով։ Սակայն մենք այդ նկարագիրը չենք կրկնել. կասկածում ենք, որ հետաքրքրական լինի ընթերցողների համար, մանաւանդ որ այնտեղ խօսք էլ չկայ արտոնութիւնների մասին։ Իրօք ամենքը համաձայնում էին, որ եկեղեցական գրքերի սխալները մեծ են և պէտք է այդ սխալներն ուղղել. որ յայտնի տօների կատարումը որոշ չափով պէտք է կանոնաւորել, ապաքէն ժամանակով ամբողջ կեանքը տօներից բաղկացած կըլինի։ Կարծիքների տարբերութիւնը միայն մի բանի մէջ էր, այն է՝ պատարագի ժամանակ գինին ջրի հետ խառնելը։ Այս փոխութիւնն ընդունելու համար գաղթականները հաւանութիւն չէին տալիս։ Բայց վարդապետի առարկութիւններն ունեցան իրենց ազդեցութիւնը, և մինչև անգամ ամենաթունդ ու յամառ հակառակորդ Ցարժիկ Կրիստոֆովիչը՝ գուցէ Լեհական Հանրապետութեան հետ սերտ կապուած լինելուց, սկսեց զիջանել, մանաւանդ երբ վարդապետը բոլոր թեր ու

դէմ կէտերն առաջ բերելուց յետոյ վերջնականապէս պարփակեց, թէ «Թագաւորն էլ կամենում է այդ Գիուլթինը, Թագուհին էլ աղօթում է Աստուծուն դորա համար։

Այդ վայրկեանին դուռն աղմուկով բացուեցաւ և շեմքում երևեցաւ մի հասակն առած կնոջ դէմք։ մուսական ծանր, մուլի հագուստը, գլխի սպիտակ ծածքը մի տարօրինակ երևոյթ էր դառն քարէ ֆոնի վերայ...

—Սեֆերովիչ մայրապետը,—լսուեցին մի քանի ձայներ։

—Այո, մայրապետը, —պատասխանեց նա,— մայրապետը, որ սակայն չէ հրաւիրուած և երևում է ձեր առաջ, որպէս զի իմանայ, թէ ինչ էք որոշում ժողովրդի երջանկութեան համար...

Ներկայ եղողները միմեանց նայեցին։

—Ա՜, այս ստապատիր վարդապետն էլ այստեղ է,—շարունակեց մայրապետը նկատելով Մուրատովիչին։—Իմ աղջկայ մարդու տանը հերետիկոս, հաւատացեալների մէջ...

Փեսան աշխատում էր հանգստացնել նորան, որովհետև յարգանքով պէտք էր վերաբերուել՝ դէպի վարդապետը նա եկել էր արքեպիսկոպոսի հետ և բացի դորանից նա հիւր էր... Սակայն նորան համոզելն ապարդիւն անցաւ։ «Այս մոլեռանդ հերձուածող կինը բորբոքեց իւր եղբայրակիցների սրտերը... ամենքը ցրուեցան՝ տրամադրուած կռուել այն հովուի հետ, որ հովւում է իւր հօտը եկեղեցու ս. հայրերի կանոնների համաձայն»։

Հետեւեալ օրը միուլթին տարածողները սաստիկ

աղմուկից արթնացան։ Փողոցները լի էին ամբոխով, որ գոչում էր.

—Ահա, բռնութեամբ փոխում են մեր ծէսերը և արարողութիւնները։ Վկայ է ինքն Աստուած, որ Թագաւորին կը դիմենք։ Թագաւորին ենք բողոքում, Թագաւորին ենք բողոքում։

Յուզուած հայր Գիդուն սակայն չէր կորցրել ուշն ու միտքը. կոմնակի փողոցներով նա գնում է քաղաքի լեհական թաղը և մտնում մայր եկեղեցու դեկան հ. Լեշչինսկու բնակարանը։ Թափուր էր այդ ժամանակ եպիսկոպոսական աթոռը. մի տարի առաջ մեռել էր պատկառելի հ. Զիժովսկին, իսկ նոր թեկնածուներ գտնելը դժուար էր, որովհետև հոգևորականութեան բարձր պաշտօնեաները սիրով չէին ընդունում Կամենեցի հովիւը լինելու պատուաւոր, բայց անարդիւն և անապահով պաշտօնը։ Հ. դեկանը, լսելով վախեցած Թէադինեանի աղերսը, խորհրդի կանչեց իւր մօտ իւր պաշտօնակցին՝ պատկառելի ծերունի պրէլատ հ. Ուլդենսկուն։ Բայց ինչով սորա կարող էին օգնել։ ճիշտ է, հրամայեցին սորա կարող էին օգնել։ ճիշտ է, հրամայեցին, որ հ. Գիդուի գրած կէտերը դրոշմեն մացին և դնեն դիւանի մէջ մանրանաւոր յիշատակութեան համար, և ոչինչ աւելի։

Սակայն խռովութիւնը սաստկանում էր. նա անցաւ քաղաքի ռուսաց մասը, և լեհական շուկայումն էլ ժողովուրդն սկսեց խմբուել։ Խաղաղ քաղաքում օտարոտի երևոյթ էին այդ աղաղակներն ու սպառնալիքները։ Եւ հէնց այդ միջոցին չկար ոչ մի աղդեցիկ մարդ, որ կարողանար հանգստացնել փոխ-

րիկը։ Պոդոլի ժեներալը՝ բերդի տէրն ու հրամանատարը, Ստանիսլաւ Ռևերա Պոտոցկին, որ այդ ժամանակ 87 ամեայ ծերունի էր, մեռնում էր Պոդչայցիում. Պոդոլի Վոեվոդան՝ Ալէքսանդր Ստանիսլաւ Բելժիցկին, ապրում էր Վարշաւում, ուր նա զբաղուած էր սահմանագլխի յանձնաժողովի գործերով։

Իրաւ է, Նիկոլ Բեզանովսկիյ կաշտելեանը քաղաքումն էր, բայց սա բոլորովին չէր ցանկանում մասնակից լինել վիճաբանութիւններին։

—Ի՞նչ էք կամենում,—հարցնում էր նա,—չէ՞ որ նոքա Թագաւորին են դիմում, պահպանում են իրենց արտունութիւնները, որ տուել է նոցա կառավարութիւնը...

Երբ հ. Պիդուն առանց որ և է հետևանքի տուն էր վերադառնում, ճանապարհին ընկաւ ազմուկ հանող գաղթականների մէջ։ «Ես դողում էի ահից,—գրում է նա,—վախենալով որ մի գուցէ խռովութիւնները սաստկանան»։ Բայց երևում է, որ բաւական խաղաղ ապստամբողներ են եղել, քանի որ հ. Պիդուի գլխից ոչ միայն մի մազ անգամ չէր ընկել, այլ և թողել էին, որ նա քարոզէր և երբ նա յայտնել էր, թէ Վարշաւ պիտի գնայ Թագաւորի մօտ պատմելու Կամենեցում ունեցած իւր անյաջողութիւնները... այն ժամանակ բոլոր գաղթականները, երբ լսում են Թագաւորի անունը, խլկոյն լռում են և սկսում հաւատացնել նորան, թէ «կամենում են միանալ, բայց չեն կամենում բռնութիւն»։ Սակայն խեղճ խաչալցին իւր անձի համար էր երկիւղ կրում և հանգստացնում յուզուածներին, «և այսպէս—շարունակում է նա,—ես պրծայ նոցա

ձեռից և եկայ եպիսկոպոսի մօտ»։ Բայց հովիւները, տեսնելով որ ոչխարները ցրւում են, պակաս չանհանգստացան և պահանջեցին զօրապետի փոխանորդից, որ զինուած մարդիկ ուղարկէ. սակայն դեռ առաջ նա ինքն էր առաջարկել այդ իւր կողմից, իսկ «այժմ, փոխանակ խռովարկուներին վախեցնելու, ինքն էր վախեցած վազում եպիսկոպոսի մօտ և խնդրում, որ, եթէ կարելի է, չգրգռէ հայ ժողովուրդը, որի ձեռքումն է Կամենեց քաղաքը, այդ կարևոր և օտարների աչքում աւարի համար պատուական համարուած քաղաքը։ Նա ուշադրութիւն դարձրեց և այն հանգամանքի վերայ, որ Կամենեցում լեհացիները սակաւաթիւ են, իսկ յոյս դնել հերձուածող Ռուսինների վերայ չէ կարելի, այլ ընդհակառակը՝ պաշարման ժամանակ պէտք է հսկել նոցա տների վերայ, որ չթողնեն թշնամիներին քաղաք մտնել։ Նա ինքը կարծում է, որ եպիսկոպոսը պէտք է մի թուղթ գրէ Թագաւորին և նուիրակին, իսկ հայ ժողովուրդը խոստանում է իւր կողմից ամեն բան անել, երբ կրստացուի Թագաւորի հրամանը»։

Այսպէս է գրում հ. Պիդուն։ Գաղթական հայերի խորամանկութիւնը բաւական յաջող էր—Եան Կաղմիրը, որքան էլ որ սրտանց կամենար, բռնի կերպով չէր կարող մի-ութիւն մտցնել, որովհետև հակառակ վարուած կըլինէր այն արտունութիւններին, որ ինքն էր վաւերացրել։ Ուելացեներ և այն, որ այդ ժամանակ զօրապետի փոխանորդը և ամրոցապետն Ալոյիսիոսն էր, որ մի եռանդուն, բաջասիրտ և խոհեմամիտ մարդ էր։ Գուցէ նորա համար ձեռնտու

էր Թորոսովիչի առաջ իրեն շատ անհանգիստ ներկայացնել, որովհետև չենք ենթադրում, որ նա հայ բնակիչներից վախեցած լինէր, որ մինչև այժմ յայտնի ազգերից ամենաանմեղն է։ Հօրաստեսը գործում էր աւելի որպէս խաղաղութիւն սերմանող. նորա խորհրդով ժողովուրդը երկու պատգամաւոր ուղարկեց Վարշաւ, որոնց պարտականութիւնն էր դահի առաջ պաշտպանել հայ ժողովրդի իրաւունքները։ Այդ նպատակի համար Սեֆերովիչ այրին նուիրեց 1000 ոսկի իւր սեպհական կարողութիւնից, մի այդքան էլ քաղաքացիները ժողովեցին։ Արքեպիսկոպոսը իւր կողմից հ. Գրիգորիս Բալսամին ուղարկեց, և աւելացնենք փակագծում—ճանապարհածախս ոչինչ չտուեց, այնպէս որ բոլոր ծախսերը հ. Գիդուն պիտի վճարէր։ Այդ իսկ միջոցին գաղտնի մարդ ուղարկուեցաւ Էջմիածին հարցնելու, թէ ինչպէս վարուեն։

Փոթորկից յետոյ խաղաղութիւն տիրեց։ Երկու կողմն էլ, սպասելով պատասխանի, հանգիստ ու խաղաղ էին։ Սատանան նեղում էր Թորոսովիչին, իսկ յետոյ նա կաթուածահար եղաւ. նորա օգնականն էլ հիւանդ էր։ Հ. Գիդուն կարդում էր տեղական եկեղեցական գրքերը և նշանակում անճիշտ տեղերը. նորան օգնում էին Զիմոնովիչն ու Մուրատովիչը, որ արդէն եկեղեցիների միութեան պարզ կողմնակիցներ էին։

Կամենեցի բնակիչների կողմից եկած պատգամաւորները՝ Վարշաւ հասնելուց յետոյ, ներկայանում են Թագուհուն, որովհետև այդ ժամանակ Թագաւորը քաղաքից բացակայ էր, ներկայանում են և նուի-

բակին, որի ծառաներին նորա առատօրէն վարձատրեցին։ Յետոյ նորա դիմեցին պետական քարտուղարին, հաւատալով նորան գործի վիճակն ու վիճուդնելը, թէ. երկու կողմերից որն է իրաւացի, և խոստացան, որ անպայման կը հնազանդուեն մի այդպիսի բարձրաստիճան պաշտօնէի որոշմանը։ Պետական արտուղարը Նիկոլայ Գրաժմովսկին էր, որ այդ ժամանակ միայն Լուցկի եպիսկոպոս և Սեցիկովի «օպատ» էր. 1666 թ. աշնանը միայն նա պրիմաս և արքեպիսկոպոս նշանակուեցաւ, թէպէտ նորա նախորդը նոյն տարուայ ապրիլի 1-ին էր վախճանուել։ Այսպէս Գրաժմովսկի եպիսկոպոսն զբաղուեց Կամենեցի հայերի գործով։ Նորա ներկայութեամբ հայերի պատգամաւորները վիճաբանեցին հ. Բալսամի հետ, և ի հարկէ սա յաղթող հանդիսացաւ։ Պետական քարտուղարը շատ պերճախօս էր և կարողացաւ համոզել պարզամիտներին, և հայերն այժմ սկսեցին պաշտպանել իրենց տրուած արտունութիւնները և մատնացոյց անել այն պայմանագիրը, որ առաջուց կապել էին Թորոսովիչի հետ։ Ծերակոյտի անդամը խոստացաւ ոչինչ չմոռանալ։ Թուղթ էր պատրաստուած Կամենեցի բնակիչներին ուղարկելու. թագուհին և նուիրակը նամակներ էին գրել հ. Գիդուին։

Մանաւանդ քաղաքագիտական էր թագուհու վարմունքը։ «Ձեր թուղթն ստացանք,—գրում է Մարիա-Լիւդովիկէն,—և մեծ հաճութեամբ լսեցինք ձեր առաքելութեան յաջողութիւնները. հաճելի կը լինի, եթէ ապագայում էլ երբեմն երբեմն տեղեկութիւններ տաք մեզ գործերի մասին»։ Նա գիտէր, որ այդ նամակի պատճէն բազմաթիւ օրինակներով պիտի տա-

ռասուն օր եկեղեցում են անց կացնում, այնտեղ են ուտում, խմում և աւետարան կարդում, գլխաւորապէս չորս աւետարանիչներին։ Մոլորութիւնները Իլվովում վերջնականապէս արմատախիլ անելու նպաստեցին Թէոդոսեանների դպրոցից դուրս եկած քահանաները։

Սակայն ոչ ամենքն և ոչ էլ մի անգամից ընդունեցին նորամուծութիւնը։ Մայրապետ Սեֆերովիչը և միանձնուհիները չենթարկուեցան նորան։ Նորա համար յանցանք էր հին հաւատին կպչելը։ Այդ պառաւ կնոջ հետ շատ քաղաքավար կերպով պատահում էր հ. Պիդոն և աշխատում համոզել ու գրաւել նորան,—բայց ի զուր, ոչինչ չէր օգնում. այդ պատճառով նա ուրիշ, թերևս ոչ այնքան պատուաւոր միջոցների դիմեց։ Իւր յիշատակարաններում նա յիշում է այդ մասին. «Մի քանի անգամ ծածուկ խօսեցի Կամենեց քաղաքացի մի հայ միանձնուհու հետ, որի անունը Մարիամ էր, մօտաւորապէս 35 տարեկան, և որովհետև նա այցելել էր շատ աշխարհներ՝ Հայաստան, ս. Տեղերը, Իտալիա, ուստի բացի իւր ընկերուհիներից, գիտէր և իտալերէն ու հայերէն։ Եւ որովհետև յաճախակի նա տրտնջում էր ուրիշ հայ կոյսերի՝ իւր ընկերուհիների, անկարգ ու անկանոն կենցաղավարութիւնից, որի մասին վերը ես յիշատակեցի, այդ պատճառով էլ յորդորեցի եպիսկոպոսին, որ գնայ, այցելէ նորան և ըստ կարելոյն աշխատի վերացնել այն անկարգութիւնները, որ սովորաբար սպրդվում են միայնակեաց կանանց կեանքի մէջ, մանաւանդ եթէ չունին որոշ կանոններ և տեսուչներ։ Արքեպիսկոպոսը

գնաց և տեսաւ այդ խառնիճաղանճ վիճակը, որի մէջ բնակվում էին, նոցա անընդհատ կռիւներն ու տարաձայնութիւններն, երբ և իմացաւ, որ նոքա միայն աշխարհական իշխանութեան հրամանով են միանձնուհիներ, առանց եպիսկոպոսի կամ քահանայի օրհնութեան, պատրաստ էր արդէն իմ խորհրդով իւրաքանչիւրին իւր տունն ուղարկելու, մինչև կը զղջան և կընդունեն կանոնադրութիւնը։ Սակայն նոցա մայրապետը՝ մի Սեֆերովիչ, կին հակայն նոցա մայրապետը՝ մի Սեֆերովիչ, կին հակայն նոցա աւագ դատաւորի զոքանչը՝ յամառ հերետիկոյոց աւագ դատաւորի զոքանչը՝ յամառ հերետիկոսուհին, ոչ մի կերպ չուզեց իւր հաւանութիւնը»։

Բանը վերջացաւ նորանով, որ Մարիամն ստիպուած եղաւ թողնել վանքը. միւս միանձնուհիները մնացին՝ պահելով հին կանոնները։ Ինչպէս տեսնում ենք, Սեֆերովիչը շատ ազդեցիկ անձնաւորութիւն էր և չէր կարելի նորան բանի տեղ չդնել։ Միութիւնը կայացնելուց յետոյ նա մի անգամ էլ փորձեց բողոք յարուցանել. նա համոզեց իւր եղբայրներին ս. Մարիամ կուսի տօնին խմբովին Խորակից

նոր սրբագրութիւններով։ Ցաճկաց արշաւանքի ժամանակ մայրապետը դեռ Կամենեցում է լինում. գնացել էր նա արդեօք միւս միանձնուհիների հետ դէպի Արևելք, թէ այդ թափառումից առաջ աւարտել էր կեանքը,—ոչ մի տեղեկութիւն մեզ չեն տալիս դորա մասին այն աղբիւրները, որոնցից մենք օգտվում ենք։

Միութեան պատճառ հ. Պիդոն թողեց Լեհաստանը 1668 թ. և գնաց Իտալիա. նորա մասին ուրիշ ոչ մի բան չգիտենք։

Նիկոլ Թորոսովիչ եպիսկոպոսն իւր սիրական միանձնուհու մահից յետոյ, որին նա հրամայեց մեծ շքով թաղել Իլվովում, դէպի լաւը փոխուեցաւ։ Թողեց ձիեր վաճառելը, թէև մինչև մահ ձիերի սաստիկ սիրահար մնաց, իսկ որ գլխաւորն է, թողեց ծխականներին կեղեքելն և եկեղեցական սպասներ յափշտակելը, բաւականանալով այն արդիւնքներով, որ նա իրաւունք ունէր ստանալու։ Իւր կեանքի վերջին տարիները՝ Հռովմից վերադառնալուց յետոյ, նա անց կացրեց աղօթքներով և յիշատակարան գրելով, և մեռաւ 1681 թ. շատ օրինակելի կերպով, չհասնելով խորին ծերութեան, ինչպէս առ հասարակ լինում են այդ ազգի հոգևորականները։ Այսպէս թէ այնպէս կէս դարուց աւելի՝ 54 տարի, նա կառավարեց հօտը։ Նա կրօնական յեղափոխութիւն անող չէր իւր համոզմունքներով։ Պատահաբար առաջ գնալով նա թողնում էր, որ իրեն կառավարեն—և իսկապէս դորա մէջ է նորա արժանիքը։

Կամենեցի նուաճումից յետոյ Եան Գրիգոր Մուրատովիչը գալիս է Իլվով, ուր սեպհական տուն ունէր։ «Նա նշանաւոր էր իւր բարք ու վարքի արտակարգ մաքրութեամբ, և որպէս լուսաւորուած ու գիտութիւնների միշտ նուիրուած մարդ, Վարդան արքեպիսկոպոս Գուլանեանից նշանակուեցաւ առաքելական պրոտոնոտարիուս»։ Նա քահանայ դարձաւ։ Այսպէս վերջացրեց իւր ասպարէզը Կամենեցում ծընուած և հեռաւոր արևելքում կրթուած վարդապետը։

Սորանով աւարտում է մեր պատմութիւնը։

Այսպէս է այն Հայաստանի պատմութեան վերջին երեսը, որ տեղափոխուել էր Լեհական Հանրապետութեան հովիտները։ Այդ ժամանակից եկուորների գծերը, որ զանազանում էին նոցա ընկերներից, աւելի և աւելի հարթվում են. եկեղեցին՝ ազատուելով պրէտորների ու հոգաբարձուների լծից, աւելի անկախ դիրք է ձեռք բերում և Հռովմի հետ կապուած լինելով՝ յետ է մղում արևելեան քաղաքակրթութիւնը՝ փոխարինելով նորան արևմտեանով։ Լեհացնելը՝ որպէս հետևանք այդ փոփոխութեան, միայն ժամանակի խնդիր է դառնում։

Դորան նպաստում է Կամենեցի և Պոդոլեան նահանգի նուաճումը։ Ցամառների մի խումբ,—աւելացնենք ոչ բազմաթիւ,—տաճիկների իշխանութեան ներքոյ մնաց, իսկ մեծամասնութիւնը Լեհաստան շտապեց, որպէս իւր հարազատ և սիրելի հայրենիքը...XVIII-րդ դարում գաղթականների մի նոր հոսանք, որ փոքրիկ խմբերով հաստատուել էին Լեհական Հանրապետութեան մէջ, հեշտութեամբ էր ընդունում տեղական սովորութիւնները. շուտով նա լեհացաւ առանց որ և է բռնութեան, այնպէս որ հետևեալ սերունդը ոչ մի բանով չէր զանազան-

վում լեհական թագաւորութեան միւս բնակիչներից, բացի արտաքին գծերից, որ բնորոշում էին նոցա արևելեան ծագումը։

Կրկնում ենք, գաղթականները լեհանում էին, որովհետև նոքա գոհ էին, որովհետև նոր հայրենիքը հիւրասիրութեամբ էր նոցա ընդունում իւր գիրկը, լաւ սեղանին էր նստեցնում, պատուաւոր տեղ էր ցոյց տալիս եկողներին, ասես թէ իւր բաց սրտով և հիւրասիրութեամբ կամենում էր թեթևացնել աստանդականութեան նոցա դառն բաժինը, սրբել մայրենի երկրի համար նոցա թափած արտասուքը...

Հալածուածները մխիթարվում էին, հաւատացած լինելով թէ այն ողորմածութիւնն ու բարերարութիւնը, որ իրենց ողջունին ցոյց էին տալիս որպէս պատասխան, չեն լինիլ վայրկենական պարգև, այլ մշտական և անխախտելի... Եւ կապուեցան նոքա այդ երկրորդ մօր հետ։ Երևում է, որ նա խորթ մայր չէր, այլ գորովալից ստնտու մայր, որի կրծքում այնքան սէր կար, որ բաւականութիւն տուեց ոչ միայն իւր զաւակներին, այլ և խանդաղատեց օտար, անտուն որբերին...

Կապուելով կամաց կամաց նոքա մոռանում էին Հայաստանի կապուտակ երկինքը, առասպելական գեղեցկութեան հովիտները, մայրենի երկրի անթիւ ու անհամար հարստութիւնները...

Ճանապարհորդական վրաններ խփելով ժայռերի վերայ՝ նոքա առ միշտ բնակութիւն հաստատեցին մեր մէջ, և այնպէս ձուլուեցան այս անկիւնի հետ, որ այդ ժամանակից մեր աղքատիկ երկիրը նոցա

աչքում աւելի թանակ սկսեց երևիլ, քան նախկին հարուստ երկիրը։ Այդ պատճառով, երբ թշնամին սպառնում էր Լեհաստանին, նոքա ամենքը, որպէս մի անձ, նորա պաշտպանն էին հանդիսանում... Եւ վերջ ի վերջոյ լեհական հայերից նոքա դարձան «լեհացիներ հայկական ծագումով»...

Բագուի Հայոց Հոգեւոր Դպրոց Հիշատակարան (Օրիորդաց)

«Ազգային գրադարան»
NL0397837

5666